

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891. 99

U - 92

6 DEC 2010



ଶ୍ରୀକୃତ୍ସ

81.99  
0-0-9

891.99

Ա-92.

ԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՎԱՑՈՎԱՆ ԿՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Գրութանեմեց բայց եւկընեի միացէ՛

58

## ԱՐԺԱՐՈՒՆԻՒ

ԿԱՐՄԻՐ ՑԱՂԲԱՆԱԿ

120

Հքառարտկութիւն  
Քառակային կոմիտեի  
Ամերիկա — 1921 № 2



25.02.2013

22.314

ЕДИНСТВО

Безумству храбрых поем мы славу.

М. Горький

Տովարան Ա. Մալիսասեանի ԸՆ-ԱՂԹ:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Դուք, որ անձկօրէն կուռւմ էք վստան  
Կարմիր բանակի անյաղթ շաբքերումք  
Խորտակում բարքեր, երկրներ հոկու  
Նոր կեանքի համար...  
Զեզ եմ նւիրում...

Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Եւ շարքերով սեղմ, առողջ յաղթանդամ  
Թանւորն այսօր՝ կարմիր բանակի  
Յեղափոխութհան եւ յաղթանակի  
Հեղինակն վեհ,  
Բայլերով վստահ  
Անցնում է ահաւ

Երէկ գեռ գերի և կիսաստըռուկ՝  
Սրոտ ձեռքերով, դէմքով հիւանդոտ  
Քուրայի կողքին, մեքենայի մօտ  
Խռանդն էր ծախում՝  
Ուրիշի համար  
Կառուցում տաճար:

## Ա Հ Ա Զ Ա Ն Դ

Քրտնքի խոշոր կաթիլներն առատ  
Իրաբ ետևից իջնում էին վար  
Բանւորի ճակտից կռելու համար  
Սպատ կենցաղի՝  
Օրերը գալիք,  
Օրերը ծաղիկ...

Կարմիր նւագի յաղթական թափին  
Չայնակցում է զիլ բանւորն այսօր  
Նրգն իր միակ՝ յաղթական, հզօր  
Գնում է առաջ  
Քայլերով հաստատ  
Բանւորն աղատ:

Եւ այսօր ուժգին, հարւածով զօրեղ  
Մենք ահազանդի պոկում հնք թոկեր  
Եւ քանդում, փշրում նկուղները նեղ  
Մրձերով, ձեռով,  
Եռանդով կորով...

Չայնում ենք այսօր վաղեր պայքարի,  
Որ յետ չմնա և ոչ մի ընկեր,  
Բւ ահազանդի կոչերին աբի  
Պատրաստ, աննկուն՝  
Առաջ դա իսկոյն:

Մարտի ենք կանչել և ոսկուն դեղին,  
Եւ աշխարհը հին, օրէնքը մաշած,  
Եւ խիղճը լքւած՝ հաւասար հողին,  
Մարդուն ամիկար՝  
Յաղթելու համար...

Եւ ահազանդի պինդուինդ հարւածից  
Կայծեր են պոկում բոսոր, շիկացած  
Եւ այբում անհետ անգութ, անկսկիծ  
Աշխարհը խաւար՝  
Նոր կետնքի համար...

## ԽՓԻԲ ԸՆԿԵՐ

Սթափիր, ընկեր...

Խփում էիր դու երկար ժամանակ

Մուրճդ ծանրագին խուլ նկուղներում,

Պատրաստում դու քեզ երկաթէ օղակ,

Մաքիդ ու կամքիդ սահմաններ պծում...

Բարձրացիր, ընկեր ..

Երէկ ուժգնօրէն խփեց ահազանդ

Վերածննդէ, յեղափոխութեան.

Շարքերը մտիր, էլ չառնես դու կանդ,

Գյղ ճանապարհին շատերն ընկան..

Դէհ, խփիր, ընկեր...»

Խփիր ճամարձակ մուրճդ ծանրագին,

Թող ընկնեն, փշրեն շղթան ոտներիդ,

Աշխատանքն է մեր, գործն ահաղին

Կարօտ է այսօր ոյժին քո վտիու ..

Դէհ, խփիր, ընկեր...

Քանդում հնք հիմա, հիմովին քանդում

Եւ մեծ պալատներ հսկայակառոյց,

Եւ աստծուն սփինկս, և զիտութեան տուն,

Եւ կարգեր պոռնիկ, և մտքեր սառոյց...

Դէհ, խփիր, ընկեր..

Այսօր հրձւանքով վասում ենք գեհեն

Մեսնող աշխարհի տէրերի գլխին,

Որ վազը՝ միւս օր յանկարծ չըզարթնեն,

Որ անհետ, անզարձ չքանան—կորչին...

Դէհ, խփիր, ընկեր..»

Ծանը մրճիդ տակ կայծերը վասիր

Նոր կեանքի, լոյսի, յեղափոխութեան.

Եւ շուբջդ սփակիր աստղիկներ կարմիր,

Որ հին աշխարհի տեղը բարձրանան...

## ՀՕՂԱՆՁՆԵՐ

Լսել եմ առաջ, երէկ և այսօր  
Լսում շարունակ զօղանջներ զանգի.  
Սրանցից մէկը հնչում է հզօր՝  
Միւսը զգոյշ, դանդաղ կյանդի...

Հնչիւների հետ և խօսքեր, մտքեր  
Լսել եմ այնքան առաջ և հիմա՞  
Գործարաններում խրոխտ, աներեր,  
Պալատ, տաճարում շողոքորթ, վստահ...

Եւ զանդակատան զօղանջը մոլար  
Գալիս էր ասում խօսքեր վաղեմի,  
— «Եղէք միշտ բարի, սիրեցէք իրար,  
Եղբայրներ էք դուք և ոչ թշնամի»...

Բախտի որոշած ուղիով եկէք,  
Հնազանդ ու լուռ ձեր խաչի տակին,  
Չարին թշնամուն չսպառնանք երբէք,  
Գործով և խօսքով մի դիմէք չարին»...

Իսկ տգէտ բուրժուան ժպիտով լիտի  
Ոսկու հնչիւնին տւել էր ակտնջ.  
— «Ես եմ աշխարհի, կամքի ու մտքի  
Բանալին կախարդ, ելքը ցաւատանջ»...

Իմ ձայնը քնքոյշ լսում են մարդիկ,  
Խոնարհուում նրա մեղեգու տուաջ.  
Ինչ փոյթ, թէ մեկին ատլիս է բարիք,  
Սակայն միւսին տանջանք ու հասաչ»

Սակայն մեծացող մի հզօր հնչիւն,  
Մի ուրիշ զօղանջ լսում եմ արդէն.  
Որ երէկ այնպէս չէր ձայնում, թնդում  
Համարձակ, վստահ և աղատօրէն.

— «Երեկ մենք այնքան կրեցինք զրկանք,  
Լսեցինք շոյող զօղանջներ քանի,  
Ու հաւատացինք՝ լուռ, խոնարհ եկանք  
Լսելու համար պատգամներ Բանի.

Իսկ այսօր արդէն մենք հնք զնդացնում  
Մեր մուրճը կոպիտ պողպատէ սալին,  
Պատգամ ենք կսում՝ կուռ ու անկուն,  
Մրով պիտի դատենք մեր նախորդներին»...

Հօղանջը խրիուտ, զօղանջը հզօր  
Հնչում է հիմա գործարաններում,  
Չի լսում նախկին զօղանջներն այսօր,  
Խեղպւեցին յաւէտ ձայներ ու հնչիւն»...

## Ս Ա Խ Լ ի 2

I

Մեծ գործարանի սուլիչը ձայնոտ  
Վաղ լուսաբացին՝ ամեն առաւօտ  
Զմրան թէ գարնան  
Երգում էր միայն  
Երգն իր սովոր  
Սրիւնոտ բոսոր...

— „Մենք շատ ենք տեսել օրեր դառնութեան,  
Որ եկել անցել, բայց դեռ պիտի զան  
Մաշելու համար՝  
Կապանքն իսպառ,  
Համբերանքը մեր,  
Սովատանջ ընկեր...

Եկէք գործարան... Մրճի ու սալի  
Հարւածների տակ պիտ իսպառ հալի  
Բռնութիւնը կուռ,  
Եւ միջոցը կոյր,  
Օղակը մտքի—  
Գործիքը լկաէ...

## Ս Ա Խ Լ ի 2

II

Մեծ գործարանի սուլիչը ծանօթ  
Երգում է հաստատ, բարձր և ձայնոտ  
Վաղ լուսաբացին  
Մի երգ ինքնածին,  
Ու գործի կանչում  
Զայնով իր հնչիւն...

— „Դէհ, վեր կաց շտապ, տանջւած ընկեր,  
Եւ անցիր գործի լուսաբաց է դեռ.  
Մենք առաւօտեան  
Պերածնութեան  
Կղնենք հիմքեր,  
Ազատւած ընկեր...

Արի գործարան, ժպտերես դէմքով  
Ու մուրճդ խփիր հռանդոտ, կորով  
Հարւածով աշխոյժ  
Աշխարհն անոյժ  
Քանդելու համար,  
Քանդելու համար ..

Յաղթանակեցինք մենք արդէն այսօր...  
Սյրւում է, քանդուում կուոքը դարաւոր  
Եւ մաքերը սին  
Մեր մրձի տակին  
Պիտ ոչնչանան  
Ու փոշի դառնան ..

### Դ. Լիրկնեխտի լիշտակին

Կանգ առէք իսկոյն, մի քաշէք այսօր  
Այգպէս ուժգնորէն թոկերը զանպի.  
Թող չտարածւին զօղանջներ սգւոր,  
Թողէք, որ սուզը հէնց հիմա յանգի...

40305  
40305

Մենք էլ չենք սպում ու լոլիս ուժգին,  
Չենք ձայնում փողեր, սգերթի նւադ,  
Թէկ մհծ է մեր կորուստը անգին  
Եւ վիշտն այնքան անեղր, անտակ...

Զո՞ւ գնաց անզութ, դաւաճանօքէն  
Բնկաւ նաւ անմեղ՝ Գործի մհծ ճամբին.  
Եւ զուցէ այսօր կամ վաղ նորէն  
Նոյնը վիճակւի քանի քանիխին...



ԶԵԶ ՏԹՆ Է ԱՅՍԹՈՒ...

Զեր զեղին աստծու բագինի առաջ  
Դուք ծունկ էք չոքել երկիւղածութեամբ,  
Դուք երդ էք հնչում մարտի անհառաչ,  
Երկինքը օրհնում լազուք և անամպ...

Մեր սիրան էք այրում գավինիէպսակ  
Թաղինի առաջ կուռքին ահաւոր...  
Վարդէ պատկներ, ծաղիկներ յսաւակ  
Խառոյիլը նկուռմ...  
Զեզ տօն է այսօր...

Իւզով էք օծում կուռքը զեղեցիկ՝  
Մեր արեան գնով, մեր սրտից քամւած,  
Կեանքի հնոցում զուք ձեռնարկեցիք  
Մեր զիակներից ձուլել ձեզ աստւած...

Յւ խրախճանքի երգերով տարւած  
Յաղթանակն էք զուք տօնում փտուար...  
Մենք նորից մենակ, մենք դարձեալ քաղցած  
Պատերի տակին...  
Զեզ տօն է այսօր...

Բայց չենք լա երբէք ինչ էլ պատահի,  
Եւ չենք զօղանջի սղերթի քայլերգ  
Մեծ գործի ժամին. թշնամու, ահի  
Առաջն կելնենք՝ թէ քաղցած, թէ մերկ...

Եւ Աշխատանքի, կուի ու մարտի  
Մեծ ճանապարհին բոսոր, արիւնոտ  
Մենք կհարւածենք դաւադիր, տմարդ  
Թշնամուն՝ թուլացած մոլոր, վարանոտ...

Կանգ առէք իսկոյն... Լիրկնեխտի մահւան  
Լուրը յայտնելու չենք զգում կարիք  
Նւազի, զանգի... մեր մեծ յաղթութեան  
Հիմքը դնելու երգեկու արիք...

## ՈՎՔԵՐ ԵՆ ԳԱԼԻՌ

Սրիւն է հագել երկիրը համայնչ  
Հրի մէջ խարկում կոթողներ հսկա,  
Զէնքի հարւածներ լսում են միայն.  
Անդորրը նախկին մեռաւ, եւ չկա...

Պայթում են, պոռթիում հրհիկներ բոսոր,  
Հըդեհը դրկում շնչքեր ու պալատ,  
Պայքար է ոկուել մեծ ու անսովոր  
Քայքայւում ընդմիշտ և հիմքեր հաստատ...

Երկիրն է այրւում բոսոր խարոյկում,  
Բափում են մարդիկ անէծք ու լալիս...  
Սպառէք մի պահ, նայեցէք իսկոյն  
Հեռու հորիզոն՝ ովքեր են գալիս...

— «Ոյդ մինք ենք զալիս՝ շարքելով սեղմած  
Գործարանների, քուրայի մօտից»

Քանդում ենք, վճրում երկիր ու աստւած  
Սուանց զզջալու, անահ, անկսկիծ...

Բանւորներ ենք մենք մերկ ու սովատանջ՝  
Երկար տարիներ եղել ենք գերի  
Ոսկուն ու նիւթին, հարուստին աղբած,  
Մեր ցասում հիմա նըանց չի ների...

Մեր մուրջը հիմա զնդում է հաստատ  
Նախկին տէրերի զանգերին փթած...  
Շինում ենք, ստեղծում մեր կեանքն աղատ  
Սուանց տէրերի և տուանց աստւած...

Նոր կեանքի համար քանդեցինք աշխարհ,  
Վերջ ուէք սպին, ինչու էք լալիս...  
Տապալւեց զետին և կուռք, և խաւար  
Մեր մրօտ ձեռքով, այդ մինք ենք գալիս...

## Մ Ա Խ Բ Ճ

### I

Ապրել եմ այստեղ երկար ժամանակ՝  
Եյս վառ քուրայի և սալի կողքին,  
Կրել եմ զրկանք, վէրքեր անքանակ.  
Եւ շատ ժամանակ պիտ մնամ կըկին...

Բանւորի ուժեղ ձեռներում միակ  
Շիհել եմ երկաթ շիկացած, դեղին,  
Շիհել եմ կապանք, շղթա ու օղակ,  
Որով կապել են հէնց նոյն բանւորին...

Նեղեր եմ շինել բանտերի համար՝  
Երկաթէ ցանցեր կուռ ու հաստատուն,  
Որոնցով պատել կամարներ խաւար,  
Եւ որտեղ ընկել շատ զոհեր թագուն...

Եւ ամեն անգամ, երբ եկել եմ ցած  
Երկաթ ծեծելու սալի կողերին,  
Դժ զնդոցներով՝ զսպած ու թուլցած  
Բողոք եմ ձայնել յոզնած բանւորին...

Բայց նա շաբունակ խփել է հաստատ  
Հարւածով ուժեղ—երկաթին, սալին.  
— Մերն է յաղթանակ, մեր կեանքի աղաւա  
Թրերի առաջ՝ սրանք կհալին...

### II

Ապրում եմ հիմա նոյն գարբնոցում՝  
Միհնոյն սալի, քուրայի կողքին,  
Եւ բանւորի հետ երկաթ ենք ծեծում.  
Խօսում նրա հետ և երգում կրկին...

Երեկ փշրեցինք մենք վերջին անգամ  
Եւ կապանք, օղակ, և բանտ, և աշխարհ  
Շիհում ենք հիմա զործիքներ, գութան  
Աղքատ դիւղացու, բանւորի համար...

Դէս, խփեր ընկեր, թող պոկին կայծեր,  
Մեր նոր կենցաղի հիմքերն ամրանան.  
Կործանենք, ջնջենք տէրեր ու մեծեր  
Նոր Արշալոյսին մեր կեանքի գարնան...

ՃԱՆԱՊԱՐՀ ՏԻՒՔ...

Նւազը կարմիր յաղթական թափով  
Զայնում է այսօք ողջոյն ամենքին,  
Բանւորն է գալիս լցւած եռանդով  
Մարտի դաշտերից, կարմիր բանւորին  
Տւէք ճանապարհ...

Լոյսերն երկնի իջել են երկիր,  
Զահեր են վառել անթիւ, անհամար,  
Սշխարին է խանձւում բոցերով կարմիր,  
Լոյսերն են երկնում մեղ մի նոր աշխարհ...  
Տւէք ճանապարհ...

Եւ աստղը կարմիր՝ փարոս մարդկութեան  
Շանթում է կայծակ, շիկացած երկաթ  
Լծին, կուռքերին, մոլի բոնութեան  
Եւ վառում պայծառ, զունեղ ու ճաստատ...  
Տւէք ճանապարհ...

Սէգ աշխատանքի բանակն է անցնում,  
Բանւորն աղատ մրձերով զինւած  
Գնում գործարան, որ դարբնոցում  
Կոէ հաստատուն երկաթ շիկացած...  
Տւէք ճանապարհ...

\* \*

Մենք դէնք ենք առել մրձի տեղ այսօք,  
Գանգեր ենք վշրում երկաթների տեղ,  
Բանւորներ էինք թուլացած, անդօք,  
Իսկ հիմա զինւոր անվախ ու անեղ...

Երկար տարիներ քրտնել ենք արիւն  
Եւ քարեր կրծել հացի փոխարէն.  
Մտածել ենք շատ ու նայել հեռուն,  
Բայց քաղցած ու մերկ մնացել նորէն...

Քանիսը մեզնից ընկել է անթե,  
Որքան անմեղներ մնացին այրի,  
Տանում էինք մենք մեր բեռն անթեթե.  
Մեր կողքին լսում քրքիչներ վայրի...

Եւ մուրճը մեզ հետ տնքում էր շատ խոր,  
Կայծերն երկաթի դառնում էին սառ.  
Մեր կողքին տիրում խրախճանք, ժխոր  
Ցոփ կենցաղի հետ համահաւասար...

Մենք գէնք ենք առել մրճի տեղ այսօր,  
Աէրքերն ենք այրում մեր սրտում ծաղկած.  
Փշում ենք գանգեր, հարւածով հզօր  
Կոթողներ երկնից իջեցնում ենք ցած...

Եւ գէնքերը մեր կդնենք գետին  
Ու աշխատանքի կերթանք գործարան,  
Երբ ոչնչացնենք անել մեր կուին  
Մարդուկ—սարդերի ոհմակը համայն...

### ԵԿԵՔ, ԲՆԿԵՐՆԵՐ...

Դործի ենք անցել, եկէք լնկերներ՝  
Յոդնած դու բանւոր,  
Ազբատ գիւղացի,  
Ճնշւած հնդիկ,  
Պարսիկ մոլորւած,  
Հեռաւոր ճապոն,  
Զինացի սարուկ,  
Մոնղոլ յետամաց,  
Արաբ գերիներ,  
Գու նեզը վայրի,  
Պապուաս կուիտ,  
Հոդենտոտ օտար,  
Ջրկւածներ բոլոր,  
Եւ դուք ամենքդ, որ մինչե այսօր  
Սշխատել էք շատ՝ ստացել ոչինչ,  
Քրաինք էք թափել՝ աղի ջուր ծծել,  
Եռանդ էք մաշել՝ մնացել դատարկ,  
Պալատներ շինել՝ պառկել թաց հողին,

Արիւն էք թքել ցուրտ անկողնի մէջ,  
Ամենքդ էլ եկէք, եկէք միասին  
Քանդենք, վշբենք աշխարհը հոյած,  
Երկիր վաւաշ, օրէնքը թերժաշ...  
Քանդում ենք աշխարհ կարմիր նւազով,  
Կործանում գահեր, արդէն թուլացած,  
Հրդեհում շէնքեր՝ հիմքից բռնկւած,  
Եկէք, ընկերներ, Զեղ կոչ եմ անում...  
Քանակն է գալիս յաղթական երգով,  
Բանակը կարմիր յեղափօխութեան  
Ու ազատութեան բոսոր դբօշով,  
Ճանապարհ բացէք, մտէք գուք իսկոյն  
Շարքերը նրա, շարքերը արի.,

Դուք պրոլետարներ  
Համայն աշխարհի,  
Թուր ազգերի,  
Զեղ կոչ են անում  
Եկէք, միացէք...

Ե. Լենին  
Պոեմ

## I

Դու մաքի տաճար շքեղ, հոյակապ,  
 Պողպատէ կուռ կամք ամենակարող,  
 Աւղեցոյց փարոս համայն մարդկութեան,  
 Հաստատուն խարիսխ մոլար մոքերի,  
 Կարմիր յայտնութեան հզօր մարդարէ,  
 Լուսատու արև խարխափող հոգոց,  
 Քրտնաթոր սրտի փառաքշող զեփիւռ,  
 Դու հսկա աստւած սոցիալ աշխարհի,  
 Լուսազուրկ մարդկանց շառափիղ այրող,  
 Սրտամաշ մարմնի սփոփանք նըբին,  
 Խեղճ ընկածների մեծ մխիթարիչ,  
 Գրախտ աշխարհի չքնաղ վարդուղի,  
 Գաղափարների ըմբոստ մարմնացում,  
 Գրոլետարիատի իղձի տուաքեալ,  
 Կոմմունալ կեանքի մեծ քանդակագործ,

Սէդ ձգտումների հսկող պարտիզպան,  
Գունիդ ծխածան գալիք օրերի,  
ԽօԼ տարերքներին սանձող դու կախարդ,  
Աւլոննջ աշխատող՝ անվաստակ մշակ,  
Դու անքուն դինւոր յեղափոխութեան,  
Գալիք քարերի տնյազթ դու ամրոց,  
Դու քաղցր ժպիտ աղառւածների,  
Հիւանդ աշխարհի եղակի բժիշկ,  
Մեղրանուշ երգի սիրելի հառած,  
Սառած հռանդի առատ ջերմութիւն,  
Կիսասրբուների կապուտակ կամար,  
Քմբած մտքերին լուծող բանալի,  
Բոլորջող յոյսի չնչառու համբոյք,  
Կենդանի զործի անահ առաջնորդ,  
Վաղ արշալուսի կենսազարդե ցօղ,

## II

Անհաշտ թշնամի նեխւած կարգերի,  
Հրեղէն կայծակ հին, վաւաշ կեանքի,  
Բուրժուազիայի դու զեհէն երկրի,  
Հոգեմաշ գիշեր պետերի համար,  
Մեծ խարոյկների միակ հեղինակ,  
Գու կարմիր հրգէն տափակ մարդկութեան,  
Մրացած դաշոյն լիրը օրէնքների,  
Սուտ աստւածների մերկացնող խիզախ,  
Գահակալների հոգու ուրւական,  
Կապիտալիզմի մահացու դու վէրք,  
Մարդուկ—սարդերին սառցնող ձմեռ,  
Կործանումների անարգել պատճառ,  
Գարանակալի մտքերի սահման,  
Մարմացած անէծք հալածւածների,  
Երեր մարդկութեան ցրտաշունչ մըրիկ:

## ՊԱՅՔԱՐԻՑ ՈՒԽԶ

III

Տեսնում եմ ես քեզ...  
Դծում ես հիմա ուղեղիդ գրքում  
Ուղիներ հաստատ, արահետ դործի՝  
Հասնելու համար համայն մարդկութեան  
Դերագոյն իղձին՝  
Գրովետարների գալիք միութեան.  
Մաշում ես մտքեր խոր գիշերներին  
Տանելու համար վերջին յաղթանակ  
Քաղաքացիական մեծ պատերազմի՝  
Պայքարի դաշտում,  
Բայքայեանքի մէջ,  
Դործարանից դուրս,  
Բանտերում նկուղ,  
Սովի ճիբանում,  
Զիւների տակին,  
Ծովերի վրա,  
Տիփի գրկերում,  
Օգում ցրեան միջոցներ,

Գաղթի ճամբէքին,  
Մթին դիրքերում,  
Դահիճի առաջ,  
Հրացանների դէմ,  
Ճրտի գողի մէջ,  
Հրդեհների տակ,  
Արեան անկողնում,  
Ծխի ծոցերին,  
Ասիւների տակ,  
Դարբնոցում կըակ,  
Ծով գեհններում:  
Նիւթում ես հիմա զօրեղ միջոցներ,  
Անհրաժեշտ քայլեր գալիք օրերի՝  
Խաղաղ կենցաղի,  
Երջանիկ օրւա,  
Հաւասարութեան  
Եւ աղատ խօսքի՝  
Զգել, խեղելու բազմակողմանի  
Հարւածով ուժգին, հարւածով հաստատ՝

Եւ ոսկին դեղին,  
Բարքերը վթած,  
Կարգերը մեռնող,  
Օրէնքը թերմաշ,  
Լուծը բռնութեան,  
Աստւածը շինծու,  
Դանգեր խելագար,  
Գործիքնմիր տափակ,  
Ոլը մարգկութեան,  
Ցոփ կեանքը երկրի,  
Կրթութիւնը սին,  
Տաճարներ մտքի,  
Մարդկանց ապիկար,  
Վայրի հաճոյքներ,  
Վէրքեր ես բանում տիրող կարգերի  
Սրտին, ուղեղին, և զարկերակին,  
Մահացու վէրքեր, որ դառնա անպէտք  
Թուլցած, ապիկար գոյութեան կուռմ,  
Ու ընկնի գետին, չքանա անհետ

Մրճի հարւածով,  
Խոփերով երկաթ.  
Նուռ գնդակներից,  
Թնդանօթի հազով,  
Գնդացիրի երգից,  
Մեր վառող ցասմամբ,  
Ուժերով վտիտ,  
Զեռներով մրոտ,  
Միութեամբ երկաթ,  
Մեր կամքով հաստատ,  
Հարւածով պողպատ .

Տեսնում եմ ես քեզ...  
Մտքեր են հագել ուղեղդ այսօր,  
Հոգիդ անզորրի չի դդո կարիք,  
Կարմիր հրդեհի, կարմիր յաղթութեան  
Պայքարի, կուե, զէնքի ընդհարման  
Մարմացումն ես դու. .  
Ես քեզ եմ տեսնում...

## IV

## ✓Մարկսի արձանի առաջ

Խորին լուսութիւն...

Կանգնել է մենակ արձանի առաջ,  
Ծերուկ կախարդի ճակատին նայում,  
Հայեացքը նրա ծեր մարդարէի  
Լայն, մհծ ճակատի կնճիռների մէջ  
Սուզւել է, կարծես, ուզում է լուծել՝  
Գաղանիքներ պահւած,  
Պատգամներ մոռցած,  
Մաքեր թագնւած,  
Ճանապարհ կուի:  
Կարծես նա արդէն խօսում նրա հետ,  
Թափանցում նրա ճակատից դէպ ներս  
Եւ կարդում այնտեղ բոլորին անյայտ,  
Բոլորից պահւած մտքեր յաղթութեան...  
—Ասիր գու, հայրիկ, կանչեցիր կուի,  
Յայտաբարեցիր լողուզներ վսիմ,  
Թխսեցիր նոր-նոր մտքերի վրա՝  
Կուելու համար—  
Մեծ յաղթանակի  
Օրեր ապրելու ...

Դու այնպէս վարպետ, դու այնպէս ծանօթ  
Բանւորի վշտի, նրա կարիքի,  
Տանջանքի, խոցի ամեն օր ծաղկող  
Գտար բուժելու միակ մի միջոց  
Մի ելք վերջնական բանւորի ցաւին,  
Խփեցիր ուժդին ահազանդ մարտի,  
Կանչեցիր ձայնուտ բանւորին տանջւած,  
Պրոլետարներ համայն աշխարհի,  
Եկեք միացէք<sup>a</sup> ..  
Այս, գու ասիր, ծերուկ մարդարէ,  
Կոչ արիր խրոխտ բոլոր ազգերի  
Խեղճ բանւորութեան,  
Ցոյց տւիր ճամբա աննահանջ կուի,  
Սակայն չապրեցիր օրեր յաղթութեան,  
Օրեր յարութեան...  
Ես անցա գործի ..  
Մենք այժմ անողոք կոիւ ենք մղում  
Կապիատլի դէմ՝ բուրժուացի դէմ—  
Թողել ենք հիմա մենք մուրճ ու երկաթ,  
Թողել ենք նաև խօսքեր սին, դատարկ,  
Ծիծում ենք գանգեր, շենքեր ու պալատ,  
Ծիծում ենք հնցած և մտքեր, կարգեր ..  
Զէնք ենք ձեռք առել գութանների տեղ,  
Երգի փոխարէն թնդանօդ լուսմ,

Խարոյկներ վառել հսկայածաւալ,  
Որոնց մէջ խարկում օրէնքը, աստւած:  
Խոցեր ենք բանում, խոցեր մահացու  
Սուտ աստծու կողքին,  
Պալատների տակ,  
Գահակալի մօտ,  
Բուրժուայի ճակտին,  
Կապիտալի մէջ,  
Աղայի մէջքին:  
Կուռում ենք, հայրիկ, կուռում ենք այսօր,  
Սակայն չենք դնում մեր հարցը բախտի  
Քմահաճոյքին,  
Ոչ, մենք պիտի յաղթենք, և պիտի յաղթենք,  
Ընկասկածօրէն..  
Եկել եմ քեզ մօտ, քեզ հարցնելու,  
Քեզ հետ խօսելու, խորհրդակցելու...  
Ասա, դու գոհ ես, սպասում եմ ես“...  
Խորին լսութիւն...  
Կանգնել է անշարժ ծերուկ մարգարէն,  
Մեծ պատւանդանին և ժպառում կարծես ..  
Խոկ նա թափանցող ուշիմ հայեացքով  
Նայում է վերեա ծերունու ճակտին  
Նոյնպէս մտածում...

## V

Գիշեր է հագել երկիրը համայն,  
Գիշեր է հագել երկինք ու կամաք,  
Գիշեր է հագել և հոգին նրա  
Շոքերը մթին,  
Մոքերը տանջող,  
Ինչպէս մութ գիշեր հագել են նրան...  
Նսաելէ նա լուռ և խոր մտածում...  
Գիշեր է նստել ուղեղում նրա,  
Գիշեր է նստել սեղանի վրա,  
Գիշեր է նստել նրա ուսերին.  
Մի ցաւ սրտամաշ,  
Մի վէրք հոգիտանջ,  
Սեղմում է նրան—գիշերւա նման...  
Գալիս են լուրեր, ինչպէս սև գիշեր,  
Գալիս են գոյժեր, ինչպէս սև գիշեր,  
Հասնում է գուժկան, ինչպէս սև գիշեր,  
Հաղորդում նրան, ինչպէս սև գիշեր,  
Դէպքեր պայքարից,

Անցքեր վճռական,  
Դէմքեր անմոռաց,  
Կորուստներ անդարձ,  
Ճնցող պատկերներ,  
Յուզալից վայրկեան,  
Սոսկալի աղէտ  
Խոր, զարհուրելի, ինչպէս սկ գիշեր ...  
Եւ մութը կարծես խտանում է շատ,  
Օդը սինեակի զառնում է նւազ,  
Պատերը գալիս սեղմում են կարծես,  
Յուրաք սառեցնող գրիում է նըան ..


Ընկաւ աւաղոտ Վասպից ծովի մօտ  
Ընվեհեր զինւոր խիզախ Շահումիան,  
Դաւաճանօրէն զոհ զնաց անզութ  
Վարձկանի ձեռքով Լիբէնեխտ համարձակ,  
Պայքարի կուի զոհերին խառնւեց  
Եւ նոյնպէս ընկաւ Լիւկսենբուրգ վստահ,  
Սրանց հետ մէկտեղ կտմ բաժան-բաժան  
Ընկան անհամար, ընկան բազմաթիւ.

Յեղափոխութեան զինւորներ անահ՝  
Քաջ կոմմունարներ՝  
Վայրերում չունդար,  
Լեռներում Բալկան,  
Դաշտերում Թաւար,  
Դիւղերում Գերման,  
Հորերում Բագրի,  
Աւազների մէջ,  
Վարչներում բոսոր  
Ընկան և ընկան անթիւ, անհամար ..  
Եւ լուրերը սկ,  
Գոյժերը մթին,  
Զայները խառնակ,  
Տնքոցներ մեռնող,  
Աղաղակ կեանքի,  
Տենչեր ապրելու —  
Գալիս են պատում ուղեղը նըա,  
Եւ մաշում, մաշում, ինչպէս սկ գիշեր ..  
...Բայց նա սթափւեց  
— Թող ընկնեն, ընկնեն այս կուում վերջին,

Մեր օրհասական պայքարի ժամին՝  
Նման Լիբէնեխտի,  
Շահումեանի պէս,  
Լիւկսեմբուրգի հետ՝  
Կոմմունարի պէս  
Յաղթութեան համար...  
Յարութեան համար...  
Եւ մենք պիտ յաղթենք, ով էլ որ ընկնի,  
Մենք պիտ յաղթենք, որքան եւ զան տանք,  
Համաշխարհային պրոլետարիատի  
Յաղթութեան համար զեռ զոհեր պիտ տանք,  
Անթիւ անհամար...  
Ոչ, կանգ չենք առնի,  
Չենք նայի յետև  
Եւ չենք ափսոսա...  
,

Կանգնել է խրոխտ՝ բռունցքը սեղմել,  
Նայում է հեռուն մութը ծակելով...





ՀՀ Ազգային գրադարան



NL0326416

22314

